ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՏԵՂԱԿԱԼ
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկումների արդյունքները, Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2011 թվականի նոյեմբերի 28-ին գումարվող Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ 2011 թվականի նոյեմբերի 25-ի N 01/16.6/19073-11 գրությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված նախագծերի փաթեթը նպատակահարմար ենք համարում տրոհել երկու առանձին մասերի և առաջարկում ենք վերոհիշյալ նախագծերի փաթեթի փոխարեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի ընթացքում քննարկել համապատասխանաբար հետևյալ նախագիծը և նախագծերի փաթեթը՝

1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.

2. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ